ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2026 թվականի N 1321 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1426-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 9-ի «2025 թվականին խաղողի մթերումներ իրականացնող տնտեսա-վարողներին գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի շրջանակներում բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1426-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման՝

ա. վերնագրում և 1-ին կետում «2025 թվականին» բառերը փոխարինել «2025 և 2026 թվականներին» բառերով,

բ. 2-րդ կետի 1-ին ենթակետը և 3-րդ կետը «30-ը» բառերից հետո լրացնել «և 2026 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով,

գ. 2-րդ կետի 5-րդ ենթակետից հանել «՝ 2027 թվականի հունվարի 15-ից հետո» բառերը,

դ. 2-րդ կետի 6-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին ենթակետով՝

«6.1) յուրաքանչյուր շահառուին և «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի համաձայն իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց 2024, 2025 թվականներին տրամադրված և 2026 թվականին տրամադրվող բյուջետային երաշխիքների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 5.0 մլրդ դրամը.».

2) որոշման հավելվածի՝

ա. վերնագրում և 1-ին կետում «2025 թվականին» բառերը փոխարինել «2025 և 2026 թվականներին» բառերով,

բ. 2-րդ կետի 2-րդ ենթակետը «արտահանումներ» բառից հետո լրացնել «, ինչպես նաև 2026 թվականին խաղողի գնումներ իրականացնող և 2025 թվականին արտահանումներ» բառերով, իսկ «որևէ անձ» բառերից հետո լրացնել «գործող յուրաքանչյուր վարկի մասով» բառերով,

գ. 2-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3) ՏԶՖԿ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Տնտեսական զարգացման և ֆինանսավորման կառույց» հիմնարկ.»,

դ. 2-րդ կետի 4-րդ ենթակետում և ամբողջ տեքստում «ԳՖԿ» բառը փոխարինել «ՏԶՖԿ» բառով,

ե. 3-րդ կետը «30-ը» բառից հետո լրացնել «և 2026 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով,

զ. 4-րդ կետում «2024 թվականին» բառերը փոխարինել «նախորդ տարվա ընթացքում» բառերով,

է. 8-րդ կետում «թվականին» բառը փոխարինել «և 2026 թվականներին» բառերով,

ը. 12-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք՝ նախորդ տարվա ընթացքում արտահանված արտադրանքի ընդհանուր արժեքի մասին.»,

թ. 12-րդ կետի 5-րդ ենթակետը «տեղեկություն» բառից առաջ լրացնել «շահառուի կողմից լրացված» բառերով,

ժ. 12-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությունում «2023 և 2024 թվականներին» բառերը փոխարինել «նախորդ երկու տարիներին» բառերով,

ժա. 15-րդ կետի 3-րդ ենթակետում «2024 թվականին» բառերը փոխարինել «նախորդ տարվա ընթացքում» բառերով,

ժբ. 15-րդ կետի 4-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին ենթակետով՝

«4.1) շահառուի ու «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի համաձայն իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց 2024, 2025 թվականներին տրամադրված և 2026 թվականին տրամադրվող բյուջետային երաշխիքների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 5.0 մլրդ դրամը.»,

ժգ. NN 1 և 2 ձևերում «2025» թիվը փոխարինել «202_» թվով, իսկ N 2 ձևում «2023» և «2024» թվերը փոխարինել «202_» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը տրամադրվող վարկերի նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ